# ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ազդեցության գործոն ունեցող պարբերականներում գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփող հոդվածների հրապարակման համար խրախուսանք տրամադրելու մասին կարգով» սահմանվում են գիտական հետազոտությունների ոլորտում ազդեցության գործոն (impact factor) (այսուհետ՝ ԱԳ) և կվարտիլ (Q) ունեցող պարբերականներում գիտական հոդվածներ հրապարակելու դեպքերում Համալսարանի աշխատողներին, ինչպես նաև Համալսարանի ասպիրանտներին, կլինիկական օրդինատորներին, ուսանողներին դրամական խրախուսանք տրամադրելու մասին կանոնները(այսուհետ՝ խրախուսական վճար):

2. Ազդեցության գործոնը որոշելու համար հիմք է ընդունվում «Institute for Scientific Information-ի» (ISI JCR) տվյալները:

3. Խրախուսական վճարի տրամադրման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

**Խրախուսական վճար = Գ(աշխ) × Գ(հեղ) × Գ(հոդվ) × X, որտեղ՝**

ա) Գ(աշխ)-ը գիտական աշխատանքի կատարման վայրն է (տե՛ս 5-րդ կետի 1-3-րդ ենթակետեր),

բ) Գ(հեղ)-ը հոդվածում տպագրված հեղինակների քանակից կախված գործակից է (տես 5-րդ կետի 4-րդ ենթակետ),

գ) ԱԳ-ն պարբերականի ընթացիկ ազդեցության գործոնն է՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

դ) Գ(հոդվ)-ը տպագրված հոդվածի տեսակն է (տե՛ս 5-րդ կետի 5-րդ ենթակետ):

4. Յուրաքանչյուր հրապարակված հոդվածի համար որպես բազային գործակից սահմանվում է 1 միավոր:

5. Խրախուսական վճարները հաշվարկելիս կիրառվում են հետևյալ պահանջները՝

1) ամբողջությամբ Համալսարանում կատարված գիտական աշխատանքների արդյունքում հրապարակված հոդվածի համար խրախուսման գործակից սահմանվում է 1.5 միավորը.

2) Համալսարանի և Հայաստանի Հանրապետությունում գործող այլ գիտական հաստատության հետ համատեղ կատարված համատեղ աշխատանքների արդյունքում հրապարակված հոդվածի համար խրախուսման գործակից սահմանվում է 1.25 միավորը.

3) միջազգային համագործակցության արդյունքում (Համալսարանի և արտերկրյա գիտական հաստատության միջև) կատարված համատեղ աշխատանքների արդյունքում հրապարակված հոդվածի համար խրախուսման գործակից սահմանվում է 1.0 միավորը: Սույն կետով նշված դեպքերում, երբ ԵՊԲՀ ներկայացուցիչը առաջին, վերջին կամ պատասխանատու հեղինակ է, խրախուսման գործակից սահմանվում է 1.25 միավորը:

4) աշխատանքը կատարած հեղինակների թվից ելնելով՝ որպես խրախուսման գործակից սահմանվում են հետևյալ միավորները.

ա. 1-5 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 1,

բ. 6-9 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.9,

գ.10-13 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.8,

դ. 14-17 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.7,

ե. 18-20 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.6,

զ. 21-100 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.5

է. 101-ից ավելի հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.1

5) բուն հետազոտական հոդվածների (original articles) համար խրախուսման գործակից սահմանվում է 1.1 միավորը, լիարժեք «գրականության ակնարկ» (review article) հոդվածների համար՝ 1 միավորը, իսկ «դեպքի նկարագրություն» (case report) հոդվածի համար՝ 0.5 միավորը:

6) ա. մինչև 1 ԱԳ և կվարտիլ (Q) ունեցող պարբերականում հրապարակված հոդվածի համար՝ X=100.000 դրամ: 1-ից բարձր ԱԳ ունեցող պարբերականում տպագրված հոդվածի դեպքում ազդեցության գործոնի յուրաքանչյուր 0.1 միավորի համար սահմանվում է 10.000 դրամ խրախուսական վճար,

բ. 10-ից բարձր ԱԳ ունեցող պարբերականում հրապարակված հոդվածի համար հաշվարկը կատարվում է ինչպես 10 ԱԳ ունեցող պարբերականում հրապարակված հոդվածի համար, բացառությամբ՝ Nature (իր ածանցյալներով), Science, Lancet, NEMJ պարբերականների, որոնց համար հաշվարկը մինչև 20 ԱԳ ունեցող պարբերականների դեպքում կատարվում է ըստ 5-րդ կետի 6-ի ա. ենթակետի, իսկ 20-ից բարձր ԱԳ ունեցող պարբերականների համար, ինչպես 20 ԱԳ ունեցող պարբերականում հրապարակված հոդվածի համար:

6. ա. 6-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Պատասխանատու (corresponding) հեղինակին տրամադրվում է հոդվածի համար սահմանված խրախուսական վճարի 40%-ը, եթե նա հանդիսանում է տվյալ հոդվածի առաջին կամ վերջին հեղինակը: Այդ պարագայում ոչ պատասխանատու առաջին կամ վերջին հեղինակին տրամադրվում է 30%-ը, գումարի մնացած 30%-ը՝ հավասարաչափ բաշխվում է մյուս հեղինակների միջև: Պատասխանատու միջանկյալ հեղինակին տրամադրվում է հոդվածի համար սահմանված խրախուսական վճարի 30%-ը, ոչ պատասխանատու միջանկյալ հեղինակին՝ 25%-ը: Մեկից ավելի միջանկյալ հեղինակների դեպքում գումարի 30%-ը հավասարաչափ բաշխվում է: Եթե հոդվածն ունի մեկից ավելի պատասխանատու հեղինակ Համալսարանից, ապա հոդվածի համար սահմանված խրախուսական վճարի 30%-ը տրամադրվում է առաջին կամ վերջին պատասխանատու հեղինակին, իսկ միջանկյալ պատասխանատուին տրամադրվում է խրախուսական վճարի 25%-ը:»:

բ. Եթե հոդվածում երեք հեղինակ են, ապա պատասխանատու հեղինակը ստանում է հոդվածի համար սահմանված խրախուսական վճարի 40%, եթե նա հանդիսանում է տվյալ հոդվածի առաջին կամ վերջին հեղինակը: Այդ պարագայում ոչ պատասխանատու առաջին կամ վերջին հեղինակին տրամադրվում է՝ 35%, իսկ երրորդ հեղինակին՝ 25%:

գ. Համալսարանի հիմնական աշխատողի խրախուսման գումարը ավելացնել 20% ով :

7. Խրախուսական վճարը (տարեկան առավելագույնը 12 խրախուսանք) տրվում է Համալսարանի այն աշխատակցին, ասպիրանտին, օրդինատորին, ուսանողին, ով հոդվածը տպագրելիս որպես առաջին կազմակերպություն (աֆիլիացիա) նշել է Համալսարանը:

Եթե աշխատողը կամ սովորողը որպես աշխատանքի կամ ուսման վայր Համալսարանից բացի նշել է այլ կազմակերպություն, ապա հասանելիք խրախուսական վճարը բազմապատկվում է՝

- 0.75 գործակցով (եթե Համալսարանից բացի նշել է մեկ այլ հաստատություն),
- 0.5 գործակցով (եթե Համալսարանից բացի նշել է երկու այլ հաստատություն),
- 0.25 գործակցով (եթե Համալսարանից բացի նշել է 3 կամ ավելի այլ հաստատություն):

8. Սույն կարգով նախատեսված խրախուսական վճարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր վճարները:

9. Խրախուսավճարը ստանալու համար հայտատուն/հայտատուները պետք է բավարարեն սույն կարգով նախատեսված ազդեցության գործոն ունեցող

պարբերականներում գիտական հոդվածների տպագրության խրախուսման պահանջներին, ապա ներկայացնեն համապատասխան դիմում հայտ, համաձայն սույն կարգին կից հավելվածի:

Խրախուսական վճարը տրվում է սույն կարգին համապատասխան հայտ ներկայացրած աշխատակցին, ասպիրանտին, կլինիկական օրդինատորին, ուսանողին:

10. Սույն կարգով նախատեսված խրախուսական վճարին հավակնելու մասին դիմում հայտերը ընդունվում են հոդվածի՝ թվային օբյեկտի նույնականացման ցուցիչը(doi) ստանալուց հետո 6-ամյսա ժամկետում: Դիմում հայտերը ներկայացվում են Համալսարանի գիտության վարչություն՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակով՝ դիմում հայտն ուղղելով science@ysmu.am էլեկտրոնային հասցեին:

11. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 1-ից:

12 . Ուժը կորցրած ճանաչել Համալսարանի ռեկտորի 29.12.2017 թվականի Ազդեցության գործոն ունեցող պարբերականներում գիտական հոդվածների տպագրության խրախուսման պայմանների մասին թիվ 140 Մ հրամանը:

* * *